Կադաստրի կոմիտե

# 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ

# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԳՆԱՅԻՆ ԵՎ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ

Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե
www.cadastre.am

# ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ

Կադաստրի կոմիտեի կողմից իրականացվել է նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների վերլուծություն, մասնավորապես կատարվել է Երևան քաղաքի նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների գնային և քանակական վերլուծություն: Վերլուծությունը կատարվել է ըստ վարչական շրջանների, որպեսզի նկատելի լինեն առավել ակտիվ և պասիվ վարչական շրջանները: Ստորև ներկայացնում ենք 2024 թվականի առաջին կիսամյակում իրականացված վերլուծության արդյունքները:

2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Երևան քաղաքում իրականացվել է նորակառույց (մինչև 9 տարի մաշվածություն ունեցող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 2,552 գործարք, վերոնշյալ գործարքներից 2,248 միավորը ձեռք է բերվել կառուցապատողից (գծապատկեր 1): [1]

Գծապատկեր 1. Երևան քաղաքում նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործաքների քանակական բաշխվածությունը.

Գծապատկեր 1




Գծապատկեր 2-ում ներկայացված է 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Երևան քաղաքում՝ ըստ վարչական շրջանների (բացառությամբ Նուբարաշեն վարչական շրջանի, քանի որ նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքներ առկա չեն) իրականացված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ նորակառույց և կառուցապատողից գնված բնակարանների.

[1] Նորակառույց բնակարան- շինության մաշվածությունը (շահագործման տևողությունը) բնութագրող գործակիցը առաջին անգամ կիրառվում է 9 տարի և ավել շահագործման տևողություն ունեցող շինությունների համար:

Գծապատկեր 2




Աղյուսակ 1-ում ներկայացված է ՀՀ-ում 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքից բնակարան գնելու իրավունքով գրանցված միավորների քանակային տվյալներն՝ ըստ Երևան քաղաքի և մարզերի.

Աղյուսակ 1

| **Հանրապետություն** | **2024 թվական** |
|---|---|
| Երևան | 3,418 |
| Կոտայք | 999 |
| Արմավիր | 62 |
| Տավուշ | 23 |
| Շիրակ | 26 |
| Արարատ | 66 |
| Սյունիք | 9 |
| Արագածոտն | 11 |
| Գեղարքունիք | 31 |
| Վայոց Ձոր | 0 |
| Լոռի | 0 |
| **Ընդամենը** | **4,645** |

ՀՀ-ում 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կառուցվող շենքից անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք է բերվել 4,645 միավոր բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ, որից 3,418 միավորը գրանցել ենք Երևան քաղաքում, իսկ 1,227 միավորը՝ մարզերում:

Գծապատկեր 3-ում ներկայացված է 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Երևան քաղաքում անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք բերված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների քանակական բաշխվածությունն՝ ըստ վարչական շրջանների.

Գծապատկեր 3




2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Երևան քաղաքում անշարժ գույքի գնման իրավունքով առավել քանակ գրանցվել է Նոր-Նորք վարչական շրջանում՝ 708 միավոր, ինչպես նաև Աջափնյակ վարչական շրջանում՝ 506 միավոր գույք, իսկ առավել ցածր քանակ գրանցվել՝ Էրեբունի վարչական շրջանում՝ 27 միավոր:

Երևան քաղաքի գրեթե բոլոր վարչական շրջաններում կատարվող մեծածավալ շինարարական աշխատանքների արդյունքում ստեղծվել են բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրներ և թաղամասեր: Մեր կողմից կատարված վերլուծության արդյունքում առանձնացրել ենք 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների գրանցված առուվաճառքի գործարքների տեսանկյունից առավել ակտիվ վարչական շրջանները:

Գծապատկեր 4-ում 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Երևան քաղաքում գրանցված առուվաճառքի գործարքներն՝ ըստ վարչական շրջանների.

Գծապատկեր 4




Կենտրոն-126
Աջափնյակ- 173
Ավան-104
Արաբկիր-705
Էրեբունի-38
Դավթաշեն-79
Մալաթիա-Սեբաստիա-804
Նոր-Նորք-52
Նորք-Մարաշ-4
Շենգավիթ-417
Քանաքեռ-Զեյթուն-50
Նուբարաշեն-0

# Կենտրոն վարչական շրջան




2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Կենտրոն վարչական շրջանում գրանցվել է նորակառույց (մինչև 9 տարի շահագործման մեջ գտնվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 126 միավոր առուվաճառքի գործարք, որից 86 միավորը ձեռք է բերվել կառուցապատողից:

Գծապատկեր 5-ում ներկայացված է 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Կենտրոն վարչական շրջանում՝ նորակառույց (երկրորդային շուկայից) և կառուցապատողից գնված նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ ամիսների.

Գծապատկեր 5




2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Կենտրոն վարչական շրջանի՝ Գ. Էմին 8, Արգիշտի 11/1, Գ. Գասպարյան 5, 9/1, Հ.Պարոնյան 42, 42/1, 44, Ղ. Ազգալդյան 12/6, Ձորագյուղ ազգագրական թաղամաս 21/1 և այլ առավել ակտիվ փողոցներում գրանցված նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի պայմանագրային գները՝ 1 քմ մակերեսի հաշվարկով տատանվում են 560,000-2,800,000 ՀՀ դրամի սահմաններում:

2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Կենտրոն վարչական շրջանում (Արշակունյաց 18/4, 9/2, Տերյան 107, Վերֆելի 40/2, Գ. Էմին 6, Հանրապետության 32/4, 42-46, Նորագյուղ 235/3, Պարոնյան 21/11, և այլ փողոցներ) կառուցվող շենքից անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք է բերվել 270 միավոր բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ, որոնց 1 քմ մակերեսի հաշվարկով պայմանագրային գները տատանվում են 450,000 – 2,300.000 ՀՀ դրամի սահմաններում, ընդ որում առավելագույն 1 քմ գինը՝ 2,300.000 ՀՀ դրամ գրանցվել է Տերյան փողոցում, իսկ նվազագույնը՝ 450,000 ՀՀ դրամ Նորագյուղ թաղամասում:

# Արաբկիր վարչական շրջան




Արաբկիր վարչական շրջանում 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում գրանցվել է նորակառույց (մինչև 9 տարի շահագործման մեջ գտնվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 705 միավոր առուվաճառքի գործարք, որից 601 միավորը ձեռք է բերվել կառուցապատողից:

Գծապատկեր 6-ում ներկայացված է 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Արաբկիր վարչական շրջանում՝ նորակառույց (երկրորդային շուկայից) և կառուցապատողից գնված նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ ամիսների.

Գծապատկեր 6




2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում է Արաբկիր վարչական շրջանի՝ Կոմիտաս 23/4, Ն.Աղոնց 19/8, 4, Ս. Գրիգորյան 24, Վ. Դավթյան 51, Արամ Խաչատրյան 3, Արղության 20/1, Արաբկիր 23, Վ. Համբարձումյան 113, և այլ փողոցների ու թաղամասերի նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների գրանցված առուվաճառքի պայմանագրային գները՝ 1 քմ մակերեսի հաշվարկով տատնվում են 480,000-1,100,000 ՀՀ դրամի սահմաններում:

2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Արաբկիր վարչական շրջանում (Ա. Սերոբ 44-48, 52/5, Աղոնց 19/19, 21/2, Կոմիտաս 59, 60, Արաբկիր 19,21, 51, Մալխասյանց, Գրիբոյեդով 48, 48/6, Դ. Հովհաննեսի 16, Ռ. Սևակ 30-32, Վրացական 16/3, Հ. Արղության 10/15, Գ. Ղափանցյան 1/10, Հ. Էմին 128-130 և այլ փողոցներ) կառուցվող շենքից անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք է բերվել 357 միավոր բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ, որոնց 1 քմ մակերեսի հաշվարկով պայմանագրային գները տատանվում են 380.500 – 1,800,000 ՀՀ դրամի սահմաններում, ընդ որում առավելագույն 1 քմ գինը՝ 1,800.000 ՀՀ դրամ գրանցվել է Ազատության պողոտայում, իսկ նվազագույնը՝ 380,500 ՀՀ դրամ Վրացական փողոցում:

# Դավթաշեն վարչական շրջան




Դավթաշեն վարչական շրջանում 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում գրանցվել է նորակառույց (մինչև 9 տարի շահագործման մեջ գտնվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 79 միավոր առուվաճառքի գործարք, որից 58 միավորը ձեռք է բերվել կառուցապատողից:

Գծապատկեր 7-ում ներկայացված է 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Դավթաշեն վարչական շրջանում՝ նորակառույց (երկրորդային շուկայից) և կառուցապատողից գնված նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ ամիսների.

Գծապատկեր 7




2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Դավթաշեն վարչական շրջանի՝ Տ. Պետրոսյան 1/7, Ա. Միկոյան 27, Դավթաշեն 1-ին թաղամաս 11/2, Դավթաշեն 2-րդ թաղամաս 22/2 և այլ փողոցների ու թաղամասերի նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների գրանցված առուվաճառքի պայմանագրային գները՝ 1 քմ մակերեսի հաշվարկով տատանվում են են 420,000-750,000 ՀՀ դրամի սահմաններում:

2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Դավթաշեն վարչական շրջանում (Ա. Միկոյան 64, 31, Տ. Պետրոսյան 40, Դավթաշեն 3-րդ թաղ. 7/5, Դավթաշեն 4-րդ թաղ. 46/12, 46/9, Դավթաշեն 10-րդ թաղ. 15/5, և այլ փողոցներ) կառուցվող շենքից անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք է բերվել 227 միավոր բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ, որոնց 1 քմ մակերեսի հաշվարկով պայմանագրային գները են 350,000 – 780,000 ՀՀ դրամի սահմաններում, ընդ որում առավելագույն 1 քմ գինը՝ 780,000 ՀՀ դրամ գրանցվել է Տ. Պետրոսյան փողոցում, իսկ նվազագույնը՝ 350,000 ՀՀ դրամ Դավթաշեն 10-րդ թաղամասում:

# Աջափնյակ վարչական շրջան




Աջափնյակ վարչական շրջանում 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում գրանցվել է նորակառույց (մինչև 9 տարի շահագործման մեջ գտնվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 173 միավոր առուվաճառքի գործարք, որից 149 միավորը ձեռք է բերվել կառուցապատողից:

Գծապատկեր 8-ում ներկայացված է 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Աջափնյակ վարչական շրջանում՝ նորակառույց (երկրորդային շուկայից) և կառուցապատողից գնված նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ ամիսների.




2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Աջափնյակ վարչական շրջանի՝ Գ. Հասրաթյան 15, Ցու. Ֆուչիկի 1/1, Ն. Սիսակյան, Հ. Մարգարյան, Նորաշեն թաղամաս 5, Շինարարների 28/3, և այլ թաղամասերի ու փողոցների նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների գրանցված առուվաճառքի պայմանագրային գները՝ 1 քմ մակերեսի հաշվարկով տատանվում են 305,000-685,000 ՀՀ դրամի սահմաններում:

2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Աջափնյակ վարչական շրջանում (Արզումանյան 8/2, Ալիխանյան եղբայրներ 6/1, Դեֆանս հաուզինգ թաղ. 11, Թ. Նազարբեկյան 44/13, 41/8, Ցու. Ֆուչիկի 6/1, Պ. Տիչինայի 320/10, Նորաշեն թաղ. 47/5, Հ. Շիրազ 2, 2/9, և այլ փողոցներ) կառուցվող շենքից անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք է բերվել 506 միավոր բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ, որոնց 1 քմ մակերեսի հաշվարկով պայմանագրային գները տատանվում են 295,000 – 750,000 ՀՀ դրամի սահմաններում, ընդ որում առավելագույն 1 քմ գինը՝ 750,000 ՀՀ դրամ գրանցվել է Պ. Տիչինայի, իսկ նվազագույնը՝ 295,000 ՀՀ դրամ Շիրազի փողոցներում:

# Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան




Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում գրանցվել է նորակառույց (մինչև 9 տարի շահագործման մեջ գտնվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 804 միավոր առուվաճառքի գործարք, որից 757 միավորը ձեռք է բերվել կառուցապատողից:

Գծապատկեր 9-ում ներկայացված է 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում՝ նորակառույց (երկրորդային շուկայից) և կառուցապատողից գնված նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ ամիսների.

Գծապատկեր 9




2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի՝ Մ. Մելքոնյան 52/1, 46/1, Լենինգրադյան 21/20, Սեբաստիայի փողոց 3/3 և այլ թաղամասերի առավել ակտիվ նորակառույց բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի պայմանագրային գները՝ 1 քմ մակերեսի հաշվարկով տատանվում են 300,000-730,000 ՀՀ դրամի սահմաններում:

2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում (Լենինգրադյան 23/18, 21/13, Ա. Բաբաջանյան 42/5, Ծիծեռնակաբերդի խճուղի 11/1, Մոնթե Մելքոնյան 10, 16, 52/2, Րաֆֆու 28 և այլ փողոցներ) կառուցվող շենքից անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք է բերվել 424 միավոր բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ, որոնց 1 քմ մակերեսի հաշվարկով պայմանագրային գները տատանվում են 300,000 – 720,000 ՀՀ դրամի սահմաններում, ընդ որում առավելագույն 1 քմ գինը՝ 720,000 ՀՀ դրամ գրանցվել է Մոնթե Մելքոնյան, իսկ նվազագույնը՝ 300,000 ՀՀ դրամ Ա. Բաբաջանյան փողոցներում:

# Նոր Նորք վարչական շրջան




Նոր Նորք վարչական շրջանում 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում գրանցվել է նորակառույց (մինչև 9 տարի շահագործման մեջ գտնվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 52 միավոր առուվաճառքի գործարք, որից 36 միավորը ձեռք է բերվել կառուցապատողից:

Գծապատկեր 10-ում ներկայացված է 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Նոր Նորք վարչական շրջանում՝ նորակառույց (երկրորդային շուկայից) և կառուցապատողից գնված նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ ամիսների.

Գծապատկեր 10




2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Նոր Նորք վարչական շրջանում Բագրևանդ 51, 51/1, 51/3, 51/4, Լվովյան 20/1, 22, Մոլդովական 43/3, 43/4, Գյուրջյան 11/3, 11/4 և այլ առավել ակտիվ փողոցներում գրանցված նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի պայմանագրային գները՝ 1 քմ մակերեսի հաշվարկով տատանվում են 270,000-780,000 ՀՀ դրամի սահմաններում:

2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Նոր Նորք վարչական շրջանում (Ա. Հովհաննիսյան 21, Դավիթ Բեկ 105, Բագրևանդ 82/4, Լվովյան 2/1, Ա. Միկոյան 9/3, Հ. Գյուլիքևխյան 14/2, Գյուրջյան 14/1, Մոլդովական 37/46, 49/44, Ֆ. Նանսեն 24 և այլ փողոցներ) կառուցվող շենքից անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք է բերվել 708 միավոր բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ, որոնց 1 քմ մակերեսի հաշվարկով պայմանագրային գները տատանվում են 230,000 – 600,000 ՀՀ դրամի սահմաններում, ընդ որում առավելագույն 1 քմ գինը՝ 600,000 ՀՀ դրամ գրանցվել է Մոլդովական, իսկ նվազագույնը՝ 230,000 ՀՀ դրամ Դավիթ Բեկ փողոցներում:

# Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան




Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում գրանցվել է նորակառույց (մինչև 9 տարի շահագործման մեջ գտնվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 50 միավոր առուվաճառքի գործարք, որից 30 միավորը ձեռք է բերվել կառուցապատողից: Գծապատկեր 11-ում ներկայացված է 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում՝ նորակառույց (երկրորդային շուկայից) և կառուցապատողից գնված նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ ամիսների.

Գծապատկեր 11




2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի՝ Կ. Ուլնեցու 54/7, 58/20, Հ. Ներսիսյան 3, Դ. Անհաղթ 17, Պ. Սևակ 51/2, և այլ փողոցների ու թաղամասերի առավել ակտիվ նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի պայմանագրային գները ՝ 1 քմ մակերեսի հաշվարկով տատանվում են 360,000-780,000 ՀՀ դրամի սահմաններում :

2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում (Ա. Ահարոնյան 2, Դրոյի 13/1, 22, Քանաքեռցու 137/1, Կ. ՈՒլնեցու 45/5, 56/10, 56/14, Դ. Անհաղթի 6, 14/10, Գոգոլ 12, 14, և այլ փողոցներ) կառուցվող շենքից անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք է բերվել 352 միավոր բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ, որոնց 1 քմ մակերեսի հաշվարկով պայմանագրային գները տատանվում են 280,000 – 810,000 ՀՀ դրամի սահմաններում, ընդ որում առավելագույն 1 քմ գինը՝ 810,000 ՀՀ դրամ գրանցվել է Դ. Անհաղթի, իսկ նվազագույնը՝ 280,000 ՀՀ դրամ Քանաքեռցու փողոցներում:

# Շենգավիթ վարչական շրջան




Շենգավիթ վարչական շրջանում գրանցվել է նորակառույց (մինչև 9 տարի շահագործման մեջ գտնվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 417 միավոր առուվաճառքի գործարք, որից 400 միավորը ձեռք է բերվել կառուցապատողից: Գծապատկեր 12-ում ներկայացված է 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Շենգավիթ վարչական շրջանում՝ նորակառույց (երկրորդային շուկայից) և կառուցապատողից գնված նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ ամիսների.

Գծապատկեր 12




2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Շենգավիթ վարչական շրջանի՝ Չեխովի 47, Գ. Նժդեհ 23/6, Հ. Հովսեփյան 12/1, և այլ փողոցների ու թաղամասերի առավել ակտիվ նորակառույց բնակելի շենքերի նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի պայմանագրային գները՝ 1 քմ մակերեսի հաշվարկով տատանվում են 290,000-720,000 ՀՀ դրամի սահմաններում:

2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Շենգավիթ վարչական շրջանում (Արշակունյաց 27/3, Գ. Նժդեհ 15/1, Հ. Հովսեփյան 31, Մ. Ֆրունզեի և այլ փողոցներ) կառուցվող շենքից անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք է բերվել 135 միավոր բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ, որոնց 1 քմ մակերեսի հաշվարկով պայմանագրային գները տատանվում են 360,000 – 635,000 ՀՀ դրամի սահմաններում, ընդ որում առավելագույն 1 քմ գին՝ 635,000 ՀՀ դրամ գրանցվել է Արշակունյաց, իսկ նվազագույնը՝ 360,000 ՀՀ դրամ Մ. Ֆրունզեի փողոցներում:

# Ավան վարչական շրջան




Ավան վարչական շրջանում գրանցվել է նորակառույց (մինչև 9 տարի շահագործման մեջ գտնվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 104 միավոր առուվաճառքի գործարք, որից 96 միավորը ձեռք է բերվել կառուցապատողից: Գծապատկեր 13-ում ներկայացված է 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Ավան վարչական շրջանում՝ նորակառույց (երկրորդային շուկայից) և կառուցապատողից գնված նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ ամիսների.

Գծապատկեր 13




2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Ավան վարչական շրջանի՝ Ծարավ Աղբյուր 61/4, Մ. Բաբաջանյան 72, և այլ փողոցների ու թաղամասերի առավել ակտիվ նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի պայմանագրային գները՝ 1 քմ մակերեսի հաշվարկով տատանվում են 305,000-620,000 ՀՀ դրամի սահմաններում:

2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Ավան վարչական շրջանում (Հ. Աճառյան 2/1, 35/91, 37/1, 42/5, 53 Ալմա-Աթա 1/4, Ռուբինյանց 27/78 և այլ փողոցներ) կառուցվող շենքից անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք է բերվել 309 միավոր բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ, որոնց 1 քմ մակերեսի հաշվարկով պայմանագրային գները տատանվում են 270,000 – 600,000 ՀՀ դրամի սահմաններում, ընդ որում առավելագույն 1 քմ գինը՝ 600,000 ՀՀ դրամ գրանցվել է Ռուբինյանց թաղամասում, իսկ նվազագույնը՝ 270,000 ՀՀ դրամ Հ. Աճառյան փողոցում:

# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

Մեր կողմից դիտարկվել է նաև մարզերի նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների գնային և քանակական վերլուծություն, ըստ որի իր ակտիվությամբ առանձնացել է Կոտայքի մարզը: Ստորև ներկայացնում ենք 2024 թվականի առաջին կիսամյակում իրականացված վերլուծությունների արդյունքները :

2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Կոտայքի մարզում իրականացվել է նորակառույց (մինչև 9 տարի մաշվածություն ունեցող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 207 գործարք, վերոնշյալ գործարքներից 168 միավորը ձեռք է բերվել կառուցապատողից (գծապատկեր 1):

Գծապատկեր 14 Կոտայքի մարզում նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործաքների քանակական բաշխվածությունը.

Գծապատկեր 14




Գծապատկեր 15-ում ներկայացված է 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Կոտայքի մարզում՝ ըստ ակտիվ քաղաքների և գյուղական բնակավայրերի իրականացված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ նորակառույց և կառուցապատողից գնված բնակարանների.

Գծապատկեր 15




Աղյուսակ 2-ում ներկայացված է Կոտայքի մարզում 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքից բնակարան գնելու իրավունքով գրանցված միավորների քանակային տվյալներն՝ ըստ ակտիվ քաղաքների և գյուղական բնակավայրերի.

Աղյուսակ 2

| Կոտայքի մարզ | 2024 թվական |
|---|---|
| Աբովյան | 199 |
| Ծաղկաձոր | 193 |
| Նոր Հաճն | 17 |
| Հրազդան | 7 |
| Առինջ | 181 |
| Ձովունի | 170 |
| Նոր Գեղի | 6 |
| Նոր Գյուղ | 56 |
| Պռոշյան | 11 |
| Ջրվեժ | 122 |
| Քանաքեռավան | 27 |
| Քասախ | 10 |
| **Ընդամենը** | **999** |

Կոտայքի մարզում 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կառուցվող շենքից անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք է բերվել 999 միավոր բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ, որից 416 միավորը գրանցվել է քաղաքներում, իսկ 583 միավորը՝ գյուղական բնակավայրերում:

Գծապատկեր 16-ում ներկայացված է 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Կոտայքի մարզում անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք բերված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների քանակական բաշխվածությունն՝ ըստ քաղաքների և գյուղական համայնքների.

Գծապատկեր 16




2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Կոտայքի մարզում անշարժ գույքի գնման իրավունքով առավել բարձր քանակ գրանցվել է Աբովյան քաղաքում՝ 199 միավոր, իսկ առավել ցածր՝ Նոր Գեղի գյուղական բնակավայրում՝ 6 միավոր:

# Աբովյան քաղաք

2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Աբովյան քաղաքում գրանցվել է նորակառույց (մինչև 9 տարի շահագործման մեջ գտնվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 7 միավոր առուվաճառքի գործարք, որից 4 միավորը ձեռք է բերվել կառուցապատողից:

Գծապատկեր 17-ում ներկայացված է 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Աբովյան քաղաքում ՝ նորակառույց (երկրորդային շուկայից) և կառուցապատողից գնված նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ ամիսների.

Գծապատկեր 17




2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Աբովյան քաղաքի Սևանի փողոցի, 5-րդ միկրոշրջանի 1-ին թաղամասի և Հաղթութ թաղամասի 5-րդ փողոցի նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի պայմանագրային գները՝ 1 քմ մակերեսի հաշվարկով տատանվում են 160,000-530,000 ՀՀ դրամի սահմաններում

2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Աբովյան քաղաքում (Բարեկամության հրապարակ, Օգոստոսի 23-ի փողոց, Անդրանիկի փողոց, Պետրոսյան փողոց, Ավագյան փողոց, 4-րդ միկրոշրջան,) կառուցվող շենքից անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք է բերվել 199 միավոր բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ, որոնց 1 քմ մակերեսի հաշվարկով պայմանագրային գները տատանվում են 211.000 – 504,000 ՀՀ դրամի սահմաններում, ընդ որում առավելագույն 1 քմ գինը՝ 504,000 ՀՀ դրամ գրանցվել է Բարեկամության հրապարակում, իսկ նվազագույնը՝ 211,000 ՀՀ դրամ Զորավար Անդրանիկի փողոցում:

# Ծաղկաձոր քաղաք

Ծաղկաձոր քաղաքում 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում գրանցվել է նորակառույց (մինչև 9 տարի շահագործման մեջ գտնվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 13 միավոր առուվաճառքի գործարք, բոլորն էլ նորակառույց (երկրորդային շուկայից):

Գծապատկեր 18-ում ներկայացված է 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Ծաղկաձոր քաղաքում ՝ նորակառույց (երկրորդային շուկայից) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ ամիսների.

Գծապատկեր 18




2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Ծաղկաձոր քաղաքի Անտառային 1-ին թաղամաս և Խ. Մուրադյան փողոցում նորակառույց բնակելի շենքերի նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների գրանցված առուվաճառքի պայմանագրային գները՝ 1 քմ մակերեսի հաշվարկով տատանվում են 111,000-629,000 ՀՀ դրամի սահմաններում:

2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Ծաղկաձոր քաղաքում (Սարալանջի փողոց 1-ին փակուղի, Ծաղկունյաց հրապարակ, Խ. Մուրադյան փողոց, Մկրտչյան փողոց և այլ փողոցներ) կառուցվող շենքից անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք է բերվել 193 միավոր բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ, որոնց 1 քմ մակերեսի հաշվարկով պայմանագրային գները տատանվում են 292,000 – 710,000 ՀՀ դրամի սահմաններում, ընդ որում առավելագույն 1 քմ գինը՝ 710,000 ՀՀ դրամ գրանցվել է Ծաղկունյաց հրապարակում, իսկ նվազագույնը՝ 292,000 ՀՀ դրամ Ծաղկունյաց հրապարակում:

# Ջովունի գյուղական բնակավայր

Ջովունի գյուղական բնակավայրում 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում գրանցվել է նորակառույց (մինչև 9 տարի շահագործման մեջ գտնվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 120 միավոր առուվաճառքի գործարք, որից 115 միավորը ձեռք է բերվել կառուցապատողից:

Գծապատկեր 19-ում ներկայացված է 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Ջովունի գյուղական բնակավայրում՝ նորակառույց (երկրորդային շուկայից) և կառուցապատողից գնված նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ ամիսների.

Գծապատկեր 19




2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Ջովունի գյուղական բնակավայրում (30-րդ փողոց, 30-րդ փողոց 2-րդ նրբանցք և 13-րդ փողոց) նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների գրանցված առուվաճառքի պայմանագրային գները՝ 1 քմ մակերեսի հաշվարկով պայմանագրային գները տատանվում են են 257,000 - 556,000 ՀՀ դրամի սահմաններում:

2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Ջովունի գյուղական բնակավայրում (30-րդ փողոց 2-րդ նրբանցք, 1-ին փողոց և 6-րդ փողոց) կառուցվող շենքից անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք է բերվել 170 միավոր բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ, որոնց 1 քմ մակերեսի հաշվարկով պայմանագրային գները տատանվում են 310,000 – 727,000 ՀՀ դրամի սահմաններում, ընդ որում առավելագույն 1 քմ գինը՝ 727,000 ՀՀ դրամ գրանցվել է Ջովունի 30-րդ փողոց 2-րդ նրբանցք, իսկ նվազագույնը՝ 310,000 ՀՀ դրամ Ջովունի 6-րդ փողոց:

# Առինջ գյուղական բնակավայր

Առինջ գյուղական բնակավայրում 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում գրանցվել է նորակառույց (մինչև 9 տարի շահագործման մեջ գտնվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 63 միավոր առուվաճառքի գործարք, որից 49 միավորը ձեռք է բերվել կառուցապատողից:

Գծապատկեր 20-ում ներկայացված է 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Առինջ գյուղական բնակավայրում՝ նորակառույց (երկրորդային շուկայից) և կառուցապատողից գնված նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ ամիսների.

Գծապատկեր 20




2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Առինջ գյուղական բնակավայրում (Վ. Տերյան թաղամասի 1-ին փողոց, Դուրյան թաղամաս 2-րդ փողոց, Աբովյան թաղամաս 9-րդ փողոց 1-ին նրբանցք և այլ փողոցներ) նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի պայմանագրային գները՝ 1 քմ մակերեսի հաշվարկով տատանվում են 100,000-489,000 ՀՀ դրամի սահմաններում:

2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Առինջ գյուղական բնակավայրում (Տերյան թաղամասի 1-ին փողոց, Աբովյան թաղամաս 14-րդ փողոց, Պ. Սևակի թաղամասի 20-րդ փողոց 2-րդ փակուղի, Խ. Աբովյան թաղամասի 8-րդ փողոց, Բ թաղամասի 1-ին փողոց, Պ. Դուրյան թաղամասի 5-րդ փողոց և այլ փողոցներ) կառուցվող շենքից անշարժ գույքի գնման իրավունքով ձեռք է բերվել 181 միավոր բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ, որոնց 1 քմ մակերեսի հաշվարկով պայմանագրային գները տատանվում են 320,000 – 587,000 ՀՀ դրամի սահմաններում, ընդ որում առավելագույն 1 քմ գինը՝ 587,000 ՀՀ դրամ գրանցվել է Պ. Դուրյան թաղամասի 1-ին փողոցում, իսկ նվազագույնը՝ 320,000 ՀՀ դրամ Պ. Դուրյան թաղամասի 5-րդ փողոցում:

Կադաստրի
կոմիտե